


THE
DICKRIS PUBLISHING CO.
NEW YORK CITY.



ՏԵԳՐԻՍԻ ՍԻՆԱԿՆԵՐԸ ԲԱՑ
ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 63

ՆԻՒ ԵՈՐԳ, ՇԱՐԱԹ, ՅՈՒՆՎՍՈՐ 21 1899

ԳԻՆ 3 ՍԵՆԹ

ՆՈՒՊԱՐ ՓԵՐԸ

Ա.

Փարիզէն առնուած հեռագիր մը գուժեց թէ անցեալ Շարաթ երեկոյ, Յրանալի մայրաքաղաքին մէջ մարեցաւ ազգային նշանաւոր լոյս մը՝ յանձին աշխարհահռչակ Նուպար փաշայի, որ իբր Հայ, մեր ազգին պարծանք մը եղաւ, իսկ իբր մեծ ու հանճարեղ քաղաքագէտ՝ բոլոր աշխարհի յարգանքն ու ակնածութիւնը վայելեց:

Նուպար Փաշայ Եգիպտոսի Պիզմարքն ու կյատրութիւնն էր միանգամայն. Փարաւոնի երկիրը դարձեալ ի դար պիտի յիշէ մեր հոյակապ Հայրենակիցը, որոյ կը պարտի իր կազմակերպութիւնն, զարգացումը եւ շատ մը բարեկարգութիւններն, որք Եգիպտոսի համար օրհնութիւններ եղած են:

Եւ յիշուի Պիզմարքէ մը աւելի նուրբ քաղաքագէտ մը միայն կըրնար մէկ կողմէն կուռիլ տեղական ու ներքին գեղծմանց ու նախապաշարմանց դէմ, եւ միւս կողմէ մըրցիլ Եւրոպական քաղաքագէտներու հետ:

Նուպար Փաշայ դարուս ամենանշանաւոր քաղաքագէտներէն մին է անշուշտ, եւ որ աւելի միտքարակալն է, Հայ մ'է:

Մեծանուն հանգուցեալը ծնաւ իգմբի մէջ 1825 թուականին Գաղղիոյ մէկ կողմէն կուռիլ տեղական ու ներքին գեղծմանց ու նախապաշարմանց դէմ, եւ միւս կողմէ մըրցիլ Եւրոպական քաղաքագէտներու հետ:

Նուպար Փաշայ դարուս ամենանշանաւոր քաղաքագէտներէն մին է անշուշտ, եւ որ աւելի միտքարակալն է, Հայ մ'է:

պաւորութիւն մը ձգեց, անանկ որ իր վերադարձին՝ Վիէնայի Եգիպտական լիազօր նուիրակ անուանուեցաւ 1852 թուականին: Տարի մը վերջ, Ապպաս փաշայի մահուանէ յետոյ, երբ Սաիտ գահ բարձրացաւ, Նուպար Պէյ ետ կանչուեցաւ, զի նոր Փոխարքայն իր նախորդին պէս չէր համակրէր այս նորածիլ քաղաքագէտէն, սակայն այս խուլ աստիճանի փոխուեցաւ քիչ ատենէն. Նուպար Պէյ Ապպասի ամենախիղճ պաշտօնեայն դարձաւ: Այս վերջինն չի զլջաց բնաւ երբ Նուպար Պէյ յանձնեց Հնդկական «Թրանսիթ» լինի վերջնական խնդիրը կարգադրելու պաշտօնը, զի Նուպար Պէյ չնորհիւ ու աշխատութեամբ՝ քիչ ատենի մէջ այդ խնդիր կարգադրուեցաւ. եւ ապէս զատ Գահիրէէն Սուէզ երկաթուղին լրացաւ իր շնորհիւ:

Մինչև 1863 Նուպար Պէյ շատ մը ուրիշ կարևոր պաշտօններ ստանձնեց ու այլ եւ այլ քաղաքական առաքելութիւններ կատարեց մանաւանդ յԱւստրիա: Այս թուականին, երբ Իսմայիլ փաշա Փոխարքայ եղաւ, Նուպար Կէյը Պօլիս զրկեց՝ իր գահակալութեան լուրջ պաշտօնապէս Սուէթանին հաղորդելու ու Սուէզի ջրանցքը բանալու խնդրոյն դէմ յարուցուած դժուարութիւններ վերցնել աշխատելու պաշտօնով: Պատգամաւոր Պէյը, որ յարգութիւնն ընկեր ունեցեր էր իրեն իր բոլոր ձեռնարկութեանց մէջ, այս դժուարին խնդիրն անցնեց մեծ կարգադրելու, եւ իբր վարձատրութիւն իր այս ծառայութեանց՝ Փաշայ եղաւ եւ ունեց պաշտօնի նախարարութեան ատրիճանի բարձրացաւ:

Սուէզի ընկերութեան Եգիպտոսի Փոխարքային մէջ դժուարութիւն մը ծագած էր սակայն՝ ծանօթ ջրանցքի բացման խնդրոյն առթիւ, եւ այս դժուարութիւնն արդէս եղած էր Միջերկրական կարմիր ծովին միացնելու խնդրոյն: Այս դժուարութիւնն յատուկապէս համար ո՞վ կար աւելի բարձր եւ կարող խաղաղարարի դերը կատարելու պաշտօնին, քան հոյակապ Հայ փաշան: Նուպար Փարիզ գնաց ու ամեն խոչընդոտ յարգարեց Նարոյէն Յրդի միջամտութեամբ: Իւր վերադարձին հանգուցեալ Եգիպտոսի Վաճառականական Գործոց նախարար եղաւ, ու իր պաշտօնավարութեան միջոցին այնպիսի զարկ մը տուաւ հանրային եւ վաճառականական գործոց, որ Փարաւոններու երկրին օրուան մարդն ու դիւցազնը դարձաւ: Բայց սակաւին ընդարձակ սահման մը կար Հայ քաղաքագէտին առջև: 1866ին Նուպար Փաշա Արտաքին Գործոց նախարար եղաւ, եւ 67ին Կ. Պօլիս գնաց, ուր կառուցեցաւ Եգիպտոսի Փոխարքային թաղի արտոյնը ձեռք բերել ու անոր իշխանութեան սահմանն տարածել:

Ալ Եգիպտոսը անսակ մը անկախութիւն ձեռք բերած էր՝ Նուպար փաշայի շնորհիւ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Անգլիոյ «Ռեվիւ օֆ Րիվիւ»-ի տնօրէնը Պ. Սթիւարտ, բոլոր քաղաքակիրթ ազգերու կողմէ 70 նշանաւոր ներկայացուցիչներու պատգամաւորութիւն մը պիտի կազմակերպէ, որ Բեզերսուրի պիտի երթայ Փետրվարին, գէնընկեցութեան դեսպանախորհուրդին գումարման միջոցին: Մ. Նահանգաց ներկայացուցիչները Լոնտոն երթալով՝ պիտի միանան չէզոք երկիրներու պատուիրակներուն եւ Փարիզի, Պէրլինի ու Վիէնայի մէջ մեծագուրդ գումարումներ պիտի ունենան: Վերջապէս, եւրոպական պատուիրակներուն հետ՝ Բեզերսուրի պիտի տանին աշխարհի կամքը: Այս է Պ. Սթիւարտ յատկապէս ինչպէս յայտնի է, Պ. Սթիւարտ վերջերս անսակցութիւն ունեցաւ Չարլին հետ:

Մենք ալ ձայն մը բարձրացնելու չե՞նք արդեօք: «Րիվիւ օֆ Րիվիւ»-ի խմբագրին եթէ դիմում մը ըլլայ մեր Եւրոպայի Հայ գրագիրտաց կողմանէ, խեղճ 70 թուին մէջ Հայ ներկայացուցիչ մ'ալ ունենանք:

ՀԱՅՐ ԱՆԻՇԱՆԻ ՆՈՐ ՅԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մշակի կ'իմացնեն թէ Հայր Դեւոնդ Ալիշան այժմ պատրաստ ունի քանի մը յեղինակութիւններ, ինչպէս են՝ Հայաստանի աշխարհագրութեան քարտէզ, երկու սառուար հատոններ «Հայկական» անունով. բայց վենետիկի Միտիարեան վանքը յանձնը չ'ունեներ տպագրութեան յանձնել պատկառելի զինակալին այս գործերը, նիւթական միջոցներէ զուրկ (.) ըլլալուն համար:

ՓՐՈՅԷՍՈՐ ԹԱԹԱՐԵԱՆ

Ձիքակօ, Յունի. 16
Այս կիրակէ Հայ Ուսումնասիրաց ակումբին խօսեցաւ Փրոֆ. Թաթարեան, նիւթ ունենալով «Մարդասիրութիւն»: Խոսքն ըստ ըստիւն մը ներկայ էր. Փրոֆ. Թաթարեան «Եւրոպայի միջոցով օֆ Ձիքակօ» կողմէն Մէքսիկօ գնացած էր վարիներէն մէջ մարդաբանական քննութիւններ կատարելու:

ԲՈՒՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՄՍՍԻՆ

Ամերիկայի մէջ գտնուող ամեն Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւակ, քաղաքին մէջ Հայ Եկեղեցւոյ անդամ նկատուող կամ չի նկատուող Լուսաւորչական ամեն Հայ իրաւունք ունի հաւասարապէս՝ քուէ տալ, մէկ անգամ միայն:
Բուէ տուողներուն անունները չի պիտի հրատարակուին, հակառակ ոմանց կարծածին:
Բուէ անգլիացի չունեցողներն կըրնան դիմել մեզ կամ մեր գործակալներուն:
Բուէներն պէտք է զրկել հետեւեալ հասցէով:
To the Dickris Committee,
159 E. 27th Street, New York City.

Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ պաշտօնաւորը կանոնաւոր կերպով կատարելու համար գրագրաց դաս մը կազմած լինելով՝ ձայնուող երկրորդական պէտք ունինք: Ուսար Ս. Եկեղեցւոյ երկրորդական քիչ շատ վարձութիւն ունեցող մեր երկրորդական յատկապէս որ հաճին գալ միանալ մեզ, որպէս զի կարենանք միասին եւ կանոնաւոր գրագրաց դաս մը ունենալ: Փարսաբողներն կրնան դիմել Ս. Փրոֆ. Պէրլինի 306 Իւթ Տօրգ փողոց:

ԱՉԱՏ ԼՍԱՐԱՆ

Ելքս Հօլ. Պրոտուէի և 27րդ Փողոցի անկիւնը, Նիւ Եորք:

Այս կիրակի Երեկոյ, ժամը ճիշդ 8ին

Պիտի խօսի Տ. Մուշեղ Մուրատեան, Լէօնիտաս պատերազմանաւի Հայ դեղագործը, նիւթն է. «Վերջի պատերազմը»: Տքթ. Արշակունի, նիւթն է «Գաղտնի հիւանդութիւնը արանց» (չարուեակութիւն): Պ. Գ. Պոյաճեան ոտանաւոր մը պիտի արտասանէ, եւ եթէ ժամանակ մնայ՝ վիճաբանութիւն մ'ալ տեղի պիտի ունենայ: Ամեն չափազանց այր-մարդ հըրաւիրեալ է ներկայ դանուիլ: Ըստ սովորականին պիտի երգուին ազգային երգեր:


ԽԱՂԻ ՏԵՂ ԵՐԳ ՍՈՐՎԻՆԻՑ

Չողովրդին ծանօթ է թէ Հ. Է. կինեանի 92ին Հրատարակած երգարաններն ցանկ չունէին: Այդ երգարաններուն վրայ այժմ յաւելցուած է նաև ցանկն ու կը վաճառուին իմ քով:
Գնել փափաքողներն դիմելու ենուս. M. TASHJIAN, 261 William St, N. Y.

ԱՆԱՀԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ
Ազգային, Գրական Գեղարուեստական Ա. ՉՕՊԱՆԵԱՆ, Խմբագիր:

Ստացանք «Անահիտ»-ի երրորդ թիւը՝ հետեւեալ բովանդակութեամբ, «Անահիտ» և Հայ երիտասարդութիւնը. — Անձնապան տղաքներ, — Ուրուագիծներ, — Մեկնում, — Սամսին, — Մտաւորական կեանքէն, — Օձակոչը, — Ազգային քրոնիկ, — Քաղաքական կացութիւնը:
Հասցէն՝
A. Tchobanian, 6, Place de l'Odeon, PARIS, France.



ՇԱՐԱԹԱԹԵՐԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԵ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԻՆ ԵՄՐԱԹ ՕՐԵՐ,
ՏԻԳՐԻՍ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԱՆԷՆ՝

Հ. ԷԿՆԵՆԱՆ - - - ԽՄՐԱԳԻՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՈՒ — OSUP ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
ՔԱՆԱՏԱՑԻ ՀԱՄԱՐ
ՏԼ. ՍԹ. Տարեկան 10 Փրանք.

Տարեկան 1 50
Վեցամսեայ 75
Նոսամսեայ 40

Գրար կամ նամակ ուղղել Հետևեալ հասցէին՝
To the DICKRIS PUBLISHING CO., 145 East 23d St., New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՆՐԻՔ, ՇԱՐԱԹ, ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԻ 21 1899.

ՄԵՆԻ ԱԼ ԿԸ ՄԵՆՆԱՆԻ ՄԻ ՕՐ

Բազմաթիւ յոռետեսներ կան մեր մէջ, որոց համար տեսնակ մը առաքինութիւն դարձեր է վհատեցնել հայ ժողովուրդը՝ պառակտական կարգ մը անտեղի ենթադրութիւններով: Ասոնց հաւատքն է թէ Հայ ազգին համար բացարձակապէս յոյս չի կայ. մեռաւ օր մը չէ օր մը պիտի տիրէ կ'ըսեն Փոքր Ասիոյ և անոր բոլոր ժողովուրդը. ինչպէս նաև Հայերը պիտի մարտէ իր անյազ ստամոքսին մէջ: Իսկ Հայ ազգայնականութեան համար աւելի համարձակ են ստոնք, զի՝ իրաւամբ՝ իր Հայրենիքը ձգող հայը կը նմանի ընդհանրապէս այն մահուան դատապարտուած յանցաւորին, որ սրտեալ օրի մը կ'ըստատէ՝ կախաղան ենելու ու վտահազար մեռնելու համար:

Այս սեռ ուրուրներու վհատեցուցիչ քարոզութիւններն հիմնուած են ենթադրութեանց ու գուշակութեանց վրայ: Տեսակ մը մարգարէութիւն է անշուշտ ըսել թէ օր մը չէ օր մը այս առկուռ ժողովուրդը, որ դարերու քթին ծիծաղած է երկար ատեն, ընաջինջ պիտի ըլլայ և անհետ՝ երկրագնդի վրայ:

Թուղթարք մարդոց փաստերն այսպէս կ'ըլլան. որք տարակոյտ չունինք թէ ճշմարտութենէ բոլորովին զուրկ ալ չեն... անոնց համար որք զուրկ են ազգային նկարագրէ ու այն անմահ յատկութենէն որ ազգը կենդանի պահած է դարերու արևնոտ ընթացքին մէջ: Այն որ կը գայ իր մէջ թէ կարող չէ ուրիշ ազգերու հրապարակաւ առջև անյողողող մնալ, և թէ զօրութեան դէմ չէ կարող իր համոզումն ու սկզբունք անփոփոխ պահել, այն մարդուն համար ի հարկէ զիւրին է նաև մտածել թէ բոլոր ազգ՝ իրեն պէս թուլասիրտ ըլլալով՝ պիտի չի կարենայ ապրիլ ապագային մէջ, թէև հրաշքով ապրած է ցայսօր:

Այս յոռետեսներու ենթադրութեանց ու գուշակութեանց դէմ ազգին ողջամիտ մտքը ունի հզօրացոյն փաստ մը, զոր կ'արժէ միշտ շնորհակալու ըլլալ և մտքերնուս առջև ունենանք. այն է ազգին ԳՈՅՈՒԹԻՒՆԸ: Անցեալը ապագային հայելին է: Մեր անցեալը բաւական է ապացուցանելու համար թէ ապագան մեզ ընաջինջ չի պիտի կարողանայ ընել, քանի որ տարօրինակ սոցիոլոգիայի մը կայ ազգին մէջ, որ ո՛չ սուրբ առջև սեղի կուտայ և ո՛չ մահուան դէմ կը խոսարհի: Թուլասիրտներ և ազգին խորթ զաւակներն են անոնք որ այս ու այն երևոյթէն կը լքանին, կը վհատին ու հետևաբար կը քարոզեն թէ «Եոյս չի կայ»:

Սակայն գոյութիւն ունենալը յոյս է. քանի որ գոյութիւն ունինք, զատ ըզու, գրականութիւն և ազգային որոշ յատկութիւններ ունինք, պիտի ապրինք երկար, ինչպէս որ ապրած ենք անյիշատակ դարերէ ի վեր: Եւ ապրելով վտանգութիւնը բաւական է Հայուն համար. մնացեալը ժամանակը ինք կը ընէ արդէն, ինչպէս որ ըրած է միշտ:

Աշխարհիս պատմութեանց մէջ արձանագրուած չի կայ ազգ մը, որ ժամանակի հրաշալիաց ենթարկուած չըլլայ կերպով մը: Եւ մենք ինչո՞ւ բացառութիւն պիտի ըլլանք այս ընդհանուր օրէնքէն:

Անցեալ Դեկտեմբերի 10ին, Փարիզի մէջ կնքուած Մպանիո-Ամերիկեան դաշնակցութեան թուականէն մէկ դար առաջ Միացեալ Նահանգներն երկրագնդի մակերևոյթին վրայ առ մը հող հաղիւ կը գրաւէին. Արևմուտքէն Միսիսիպի գետն էր այս հանրապետութեան սահմանադրուիլը. Հարաւէն՝ Յլօրիտան, իսկ Հիւսիսէն՝ Միացեալ Նահանգներն հազիւ կը տարածուէին մինչև Քանատա: Հարիւր տարի առաջ եթէ մէկը նիւ Օրլինս, Մօսկի կամ Սէնթ Օլուսթին և կամ Միսիսիպի գետէն անդին ո՛ր է է

անդ երթար, ինքզինքը պիտի գտնէր Սպանիական դրօշ տակ. իսկ Հիւսիսային շատ մը կէտերու վրայ, ինչպէս են Օսթիո, Նիակարա, Տիթոյթ և այլն, անգլիական դրօշը կը ծածանէր: Բայց այս չէր ամենը. այս հանրապետութիւնն անդ մը շէր բռներ ազգաց կարգին մէջ. չունէր իրաւունք մեծ Տէրութեանց ակնածութիւնն ու յարգանքը վայելելու: Ծօրճ Ուաշինգթընի երկիրը տեսակ մը Հայաստան էր՝ աչքէ երեսէ ինկած, վասն զի փոքր և տրկար էր տակաւին, ինչպէս որ մենք Հայերս ենք՝ ներկայ աննպաստ պարագաներու տակ: Սակայն 19րդ դարը ահագին փոփոխութիւն յառաջ բերաւ այս Արևմտեան ազգին վրայ: 1800ին Միացեալ Նահանգաց տարածութիւնն 850 հազար քառակուսի մղոնի շափ էր միայն. իսկ իւր բոլոր բնակչաց թիւը 5 միլիոնի հազիւ կը հասնէր: Բայց այսօր այնչափ ընդարձակուած ու զարգացած է, որ եթէ անցեալ դարու ենթադրութիւնն ուսման յարութիւն առնէին, իրենց խեղճուկ Հայրենիքը պիտի չի կրնային ճանչնալ այս նկայ հանրապետութեան մէջ, որ արուեստ, արհեստ, գիտութիւն, ուսում և ամեն ինչ իրենց զազաթնակէտին մօտեցած են այսօր: 1803 թուականէն մինչև 1898 յալորդարք միացան ու կցուեցան Միացեալ Նահանգաց Լուիզիանա, Յլօրիտա, Թէքսաս, Նիւ Մէքսիկո, Գալիֆօրնիա, Արևքա, Հայվա, Փորթօ Րիքօ և Յիլիբան կղզիներն, որոնցմով Լինքոլնբուր և Կրանթերու Հայրենիքը կունենայ այսօր 850 հազարի փոխարէն 3,770,000 քառակուսի մղոն տարածութիւն, և 5 միլիոնի տեղ՝ 90 միլիոն ժողովուրդ, անանկ որ երեք ուրիշ ազգեր կը մնան երկրագնդի վրայ, որք այս մասին կրնան գերազանցել զԱմերիկա — այդ ազգերն են Սնագլիա, Ռուսիա և Չին:

Արդ՝ ինչ որ երազ էր դար մ'առաջ՝ այսօր իրողութիւն է Ամերիկայի համար. և ո՛վ գիտէ... ինչ որ այսօր երազ կը թրւի մեզ, գուցէ դար մը յետոյ իրականութիւն ըլլայ Հայ ազգին համար...: Ինչո՞ւ յուսահատել ուրեմն, և ինչո՞ւ վհատեցուցիլ ժողովուրդը, որ քաջասիրտ պէտք ունի՝ մտնուանդ այս պարագաներու տակ: Դար մ'առաջ Ընքը Սամ հազիւ գլուխը դնելու չափ երկիր ունէր Էլիզաբէթի լեռներէն ասդին. բայց այսօր արեւը չի մարի իր աշխարհին վրայ. հոն՝ տեղ մը ջերմաշափը գէթօյն 55 աստիճան վար կը նշանակէ, մինչդեռ ուրիշ տեղ մը արմաւենին կեփի արեւի սոսկալի տարածութեան տակ, անանկ որ այս հանրապետութեան մէկ ծայրէն միւսը զնացած ըլլալու համար մարդս պարտաւոր է երկրագնդի կէտին չափ տեղ ճամբորդել անուշաւ: Եւ թերևս աւելորդ է կրկնել թէ աշխարհի ազգերն ալ, որք օր մը կը ծիծաղէին այս հակայի մանկութեան օրօրոյն առջև, այսօր ակնածութեամբ կը յարգեն ու կը պատուեն զայն, զի մանկութիւնն ու սկարութիւնն անցաւ այս մանկան:

Եւ ժամանակի հրաշքը չէ՞ այս: Պատկերներ կը մեծնան ու կը զօրանան. բնութեան անբաժանարար թէնքն է այս, եթէ սակայն չի մեռնին իրենց մանկութեան մէջ: Մենք ալ կը մեծնանք մի օր, վասն զի մեռնելու տըրամագրի ազգ չենք, չենք և չենք եղած...:

ՏԵՂԻՈՅ ՄԸ ՊԵՏԻՐ

Քաղաքի մէջ քանի մը ազգային ընկերութիւններ ունինք, որք այս և այն սրահին մէջ կը հատարեն իրենց ժողովները՝ որոշեալ գումար մը վարձ վճարելով մի քանի ժամերու համար միայն: Ազգային Հոգաբարձութիւնն տարին 150 տոլար կը վճարէ անուշաղն ժողովատեղիի համար. Լսարանի համար 150 տոլարէ աւելի ծախք կը լայ. Թանգարանն 100 տոլարէ աւելի ծախքէն այս մասին, և միջին հաշուով այս քաղաքի ընկերութիւններն տարին 7-800 տոլար վարձք կը վճարեն ժողովարաններու համար: Այս բաժանեալ կերպիւ վճարուած դրամներն եթէ մէկտեղ գան, տարակոյտ չի կայ թէ կրնան ազգային տուն մը կամ հաստատուն սրահ մը վարձել՝ ամեն օրի և ամեն գիշերի համար: Անցեալ տարի խնդիր եղաւ այս հարց, բայց կը թուի թէ մտքերն լաւ պատրաստուած չըլլալով՝ բարձի թողի եղաւ: Մեր ժողովները, հանդէսները, թանգարանը և ամեն ինչ որ ունինք ազգային՝ մէկ յարկի տակ գընելով՝ այդ յարկը ազգային տուն մը կ'ըլլայ ու ծանօթ կերպով մը կը դառնայ գաղթականութեան համար: Այս ընկերութիւններու միջև հասկացողութիւն մը յառաջ բերելու համար՝ ազգային նորընտիր Հոգաբարձութիւնն ամենէն յարմար մարմինն է որ կրնայ նախաձեռնարկ ըլլալ: Կեդրոն մը ունենալն ոչ միայն նիւթապէս շահաւոր պիտի ըլլայ ժողովուրդին համար, այլ բարոյական ու ազգային շատ մը օգուտներ պիտի կրնայ յառաջ բերել Հայ ժողովուրդին ու անհատին համար:

Ներկայ Հոգաբարձութիւնն իր առջի շրջանին մէջ Եկեղեցին կազմակերպեց, թող այս տարի ալ այս կերպով ժողովուրդը կազմակերպէ, որով լաւապէս գործ մըն ալ կատարած կըլլայ իր ներկայ շրջանին համար:

ՔԱՐՈՉ ԵՒ ԴԱՍ—Վաղը, Կերակը առաւօտ ժամը 10.30ին էլքաւ Հօլք մէջ, 27րդ փողոց եւ Պրօսուէ:

ՀԵՐՔՈՒՄ Տ. ՎԱՂԻՆԱԿ ՎՐԻՍԻՆ

17 Յունիս, Փրօվիտէնս. ՏԻԳՐԻՍԻ 62րդ թուով Փրօվիտէնսի ձեր պատ. թղթակցին գրածը արդարև դարմանք պատճառեց ինձ: Ըստ ձեր թղթակցի գրութեան 25 թուին հանգանակութեան դրամ մէկն առանց ժողովրդեան գիտութեան 100 տոլար Ս. Պատրիարքին զրկած եմ, և մընի օրաբը կորսուած ըլլալով կը ջանամ եղեր խնդիրն առանց ժողովրդեան ակնյն հասցնելու՝ անոր մէկ միջոցը խորհիլ. և ցաւ կը յայտնէր մեր այդ ընթացքին նկատմամբ ևն. ևն.:

ՏԻԳՐԻՍԻ ԽՄՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ Ու ժողովրդեան անգլիական մասն առ այս տարակարծիք չընելու համար այսօր միայն պարտք կը համարիմ ըսել թէ՛ արդարև 98 Հոկտ. 28 ամսաթուով 100 տոլար զրկած եմ. Անգլիական թղթատուէն այս լուրը անմիջապէս կը հաղորդեն Ս. Պատրիարքին. և Ամենապատուութիւնն առ այս ո՛ր է նամակ ստացած չըլլալով յինչէն՝ (անշուշտ կորսուած լինելուն) կը գրէ ինձ նոյնմբեր 26 թուով թէ «100 տոլար դրամ զրկած էք, կերկր թէ նամակնիդ կորսուած է, հետևապէս տեղեկացուցէք ինչ նպատակի զրկած ըլլալնիդ»:

Արդ անկից կը հետևի՝ արդեօք թէ դրամը կորսուած է: Երկրորդ՝ նոյն միջոցին դեռ ընդհանուր գանձապետ որոշուած չէր, և եթէ որոշուած իսկ ըլլար, կարծեմ անպատշաճութիւն մը կամ զեղծում մը չէր իմ կողմէն երբ ժողովրդեան յայտարարած էի նախ քան սկզբնաւորութիւն հանգանակութեան թէ՛ գոյացած արդիւնքը Հոգաբարձութեան ձեռք պիտի զրկուի յատկացեալ տեղը, և ձեր Պ. Թղթակցը շատ մօտէն գիտցած պիտի ըլլար զայն: Արդ յարար ՎԱՂԻՆԱԿ ՎՐԻՍԻՆ

Դրամը Ս. Պատրիարքին զրկելը անշուշտ անպատշաճութիւն մը չէ ինքնին, անպատշաճութիւն էր սակայն, հանգանակութիւնը սկսելէ առաջ, ժողովրդին այդպիսի անանգլի մի խոստում ընել, քանի որ հանգանակութեան խնդիրը հրապարակ հանուած ատեն ամեն մարդ գիտեր թէ ինչ հանուր գանձապետ էր պիտի ընտրուէր: Մեր կարծիքը սա է թէ Պատրիարքարանի միջոցաւ այս մասին դրամ զրկելն սկզբունքով այնչափ սխալ է, որչափ էր անոնց ընթացքը որք իրենց հանգանակածը Պատրիարքին զրկեցին: Մ. Խմբ.

Ժողովրդական քննարկներն մը

Քանզի ազգաց իրաւունքներն կրնան են քաւ սուրբեր:

Որու սուրբ կարուկ ինի, Որու գետակն հեռու նետուի, Իրաւունքը անոր կըլլայ. Աշխարհ այսպէս կը հաւատայ:

Մուշ, 1870 ՏԱՐՈՆԵՒՆ

ԶԿՆՈՐՍ ԱՂԶԻԿ

Դու իմ սիրուն ձկնորս աղբիկ, Մակոյդդ ախին մօտեցու, Սրի՛, ի՛: մօտ նստի՛ր մօտիկ, Խօսի՛ք զրկած իրարու:

Դիր գլուխդ դու իմ սրտիս, Եւ երբէք մի՛ երկնչիր, 25՞ որ դու քեզ վայրի ծովին, Այդպէս վստահ յանձնեցիր:

Իմ սիրտս ալ է մի ովկիան, Միշտ յուզում է մրրկվում. Ինչ մարգարտ նա աննման, Ունի պահուած իր խորքում:



ՊԱՏԱՍԽԱՆ

Շատ փափագում էի, փոխանակ ինձ, մէկ ուրիշը պատասխանէր Պ. Չպուքեանին: Բայց քանի որ ուրիշները չեն ուզում կամ ուզում են, սակայն քաջութիւն չունին Պ. Չպուքեանի անտակը, միակողմանի «գիտողութիւններին» գիտողութիւն անել. այդ տհաճութիւնը, ըստ երեւոյթին միայն, մեր վերայ կ'առնենք: Բայց նախ կուզեմ յիշեցնել թէ ևս ամենեւին քննադատութեան հակառակ չեմ, ընդհակառակը կողմնակից եմ, խտապահանջ եմ, եթէ ներքին է այս բանի գործածութիւնը, քան զի հասարակական պաշտօնական կամ անհատական անձնական գործերի անաշուտութեամբ եղած քննադատութիւնը, միշտ փորձով ըստուգուած է, այն բարեբար հետեւութիւնն ունի, որ մեր հասարակական գործերին լաւ ուղղութիւն է տալիս՝ հրապարակ մտքերով այնպիսիների ձեռքից, որոնք անարժան են իրանց պատասխանատու պաշտօնին. ահա թէ ինչու է առում մեր քննադատութեան մէջ անաշուտ, անկեղծ լինելը, խոյս տալով նեղ, միակողմանի թիւ ուղղութիւնից, որ գրեթէ Պ. Չպուքեանի լռելիայից զուրկ գրութիւնից բուրում է վերջինը:

Պ. Չպուքեանի իր նամակի սկզբում մտադրութիւն է յայտնում Բարեգործական ընկերութեան վրայ դիտողութիւններ անել, բայց իր մտադրութիւնից շեղելով, դիտակցաբար կամ գուցէ անգիտակցաբար՝ ձեռքը հնազանդեցնելով ոչ թէ մըտքին, այլ սրտին. փոխանակ ընկերութեան վերայ խօսում է Պատ. Հայկուհունու դէմ, որպէս թէ Պատ. Հայկուհունու Բեյքը Բարեգործական ընկերութիւնը: Պատ. Հայկուհունու անձին դէմ մը չունիմ՝ առում է, սակայն իր բոլոր նամակը Պատ. Հայկուհունու անձին դէմ է, անտես է առնում գործը և հին դարման քամում, խօսքեր, որոնք օգուտ չունենալուց բացի՝ թշնամական ոգի են բուրում: Պ. Չպուքեանն կարծես չի իմանում թէ Բարեգործական ընկերութիւնը բաղկացած է կանոնադր անդամներից. ունի Գործադիր Ժողով, Խնամակարաց Ժողով և Օժանդակ Ժողով. և եթէ, իր կարծածին պէս, ընկերութեան նկատմամբ մեղադրելու բան կայ, այդ մեղադրանքը վերաբերում է կամ պէտք է վերաբերի Խնամակարաց Ժողովին՝ մասնաւոր Տիրաբ Թովչանեանի, կիւլպէնկեանի, Տօթթ. Այվազեանի, Տատարեանի ևն., որոնք շարունակ բաժին են ունեցել ընկերութեան ամեն կարևոր քայլերուն մէջ, ինչպէս նաև կարող է վերաբերել Գործադիր Ժողովի անդամներին և Օժանդակին. ամէն յանցանք դնելով Պատ. Հայկուհունու վերայ, նորան նախատած չը լինէր Պ. Չպուքեան, ի հարկէ, ինչպէս իր միակ նպատակն է եղած երևում, այլ այդպիսով նախատում է Խնամակարաց, Գործադիր և Օժանդակ Ժողովը, ներկայացնելով նորանց իրրև ոչնչութիւն, և Պատուելի Հայկուհունու ամեն ինչ: Յիշեցէք, Պ. Չպուքեան, քննադատութեան միջոց վաղուց արտաբերուած է նախատինքը և կարևոր սեղ տրուած՝ զուտ փաստին. իսկ ինչպէս երևում է՝ ծանօթ չէք ատենապետի պաշտօնէութեան մասին, որ է ժողով գումարել, ժողովը կանոնների համեմատ կառավարել ևն., մինչ դուք աշխատել էք ընկերութիւնը մարմնաւորել նորա մէջ...:

Սակայն իրողութիւնը այն է, թէ քիչ օրերից յետոյ, որ ամենիս ցանկութիւնն է, պաշտօնատարեկան տեղեկագրութիւնը ամեն բան պիտի յայտնէ ժողովուրդին և ամեն բան ևս պիտի պարզւի, սակայն երանի թէ գոնէ այն ժամանակ անաշուտ գտնուինք մեր քննադատութեանց մէջ: Չ. Ա.

Մ Ա Ն Բ Ա Լ Ո Ւ Ի Բ

Գեր. Յովսէփ Եպիսկոպոս Սարաճեան՝ Ս. Ծննդի առթիւ քաղաքս պիտի գտնուի և պիտի պատարագէ Ս. Ոսկերբան եկեղեցւոյ մէջ յառաջիկայ կիրակի: Խթման երեկոյնի ալ Խաչ վարդապետ պիտի պատարագէ նոյն եկեղեցւոյ մէջ: Ամսոյս 13ին, Ուրբաթ օր, Կէսօրէ վերջ, մի քանի հայ Տիկնանց մասնաւոր կարգադրութեամբ, կազմողի ծառի հանգէս մը տրուեցաւ Ս. Ոսկերբան եկեղեցւոյ մէջ տղայոց համար՝ Տ. Խաչ վարդապետի նախագահութեամբ: Երկայ էին բազմաթիւ հայ ընտանիքներ, ինչպէս նաև 50ի շուրջ հայ մանկաբոյժ: Բնակի մը երգերէն ու խօսքերէ վերջ նուէրներն բաժնուեցան աղայոց, որոց աղքատներն շաքարեղէններէ զատ ըստացան հագուստներ, կոշիկներ, զԵրկարակներ և այլն:

Տ. Մ. Մարգարեան, Ֆրէզնոյի ծանօթ ազգային քաղաքի մէջ իր լոյս պիտի ընծայէ Տի Գրի Երկրորդ տպարանէն՝ ընդարձակ ազգային պատկերազարդ նոր երգարան մը՝ «Ջութակ» անունով: Այս հատոր պիտի պարունակէ 350ի շուրջ բերաններ ու պիտի լոյս տեսնէ պրակ առ պրակ:

Անցեալ կիրակի օր Տ. Վահրամ քահանայ Ս. Պատարագ մատոյց Ոսկերբան եկեղեցւոյ մէջ ու քաղաք խօսեցաւ: Տէր Հայրը ըսաւ ի մէջ այլոց թէ իր պաշտօնանկ ըլլալէն վերջ դիմում ըրած ու օգնութիւն խնդրած էր Բարեգործական միջոցի հայ հարուստներէն ու Բողոքական Հայոց Հոգաբարձութենէն: Ասոնք ամենն ալ անպատասխան թողուցած են Բահրամի խնդրին բացի Տ. Կիւլպէնկեանէ, որ 10 տարի զրկած է եղեր իրեն: Տէր Հայրը իր մասնաւոր շնորհակալութիւնն յայտնեց ատենանէ Տ. Կիւլպէնկեանի, ու մի քանի կծու դիտողութիւններ ու ակնարկութիւններ ըրաւ Հոգաբարձութեան ուղղեալ:

Մեր կարծեօք նախ քահանան բընաւ իրաւունք չունէր առանց Եպիսկոպոսին, Հայ եկեղեցւոյ Հոգաբարձութեան ու ընդհանուր ժողովրդին դիմելու՝ Հայ Բողոքական ազգայնաց Հոգաբարձութեան դիմել՝ օգնութիւն խնդրելու. և ուրախ ենք որ մեր Բողոքական ազգայինք անպատասխան թողուցած են Բահրամի այս խնդիրը: Տէր Հայրը պարտակալութիւն մը կատարեց իր շնորհակալութիւնն յայտնելով Տ. Կիւլպէնկեանի նուէրին համար, բայց մոռնալու չէր նախկին Հոգաբարձութիւնն, որ ընտրուելէ անմիջապէս վերջ Տ. Վահրամ քահանան պաշտօնի կանչեց ու պահեց զայն մէկ տարիէ աւելի: Այս Հոգաբարձութեան, որ վերջնաբերուեցաւ այս տարի, կամ լաւ ևս է ըսել, ժողովրդի վճարած քանի մը հարկեր տարաներն ալ շնորհակալութեան արժանի չէին:

Չ. Ե. Թանգարանի միութեան եւրամեայ ընդհանուր ժողովը տեղի պիտի ունենայ այս երեկոյ Ինտիմէնտէնթ հօլի մէջ:

Անցեալ կիրակի օր Ֆիլչպրկի կրտսէր Հօլին մէջ Սարաճեան Սրբազան խօսած է տեղւոյն Հայոց կարգադրուած է հոն նաև Վեհ. Հայրիկի կանգալը ու Լուսաւորչական եկեղեցւոյ պատկանալ Հայոց անուաններն արձանագրուած են: Ս. Փրկիչ եկեղեցւոյ պարտուց համար հանգանակութիւն բացուելով՝ § 12.50 հաւաքուած է:

Պ. Երկանեան հրատարած է առանձին նամակաւ Եպիսկոպոսական քուէարկութեան յանձնարարի անդամակցութենէն:

Ամսոյս 13ի երեկոյն Ուսթըրի Հայ Բողոքական տիկնաններն ալ հանդէս մը տուին, որ իր տեսակին մէջ շատ փառասիր եղաւ: Հանդիսին մէջ ոտի մատանի մը նուիրուեցաւ Պատ. Պէննէեանի:

Հ Ա Ն Ի Ե Ս Ա Լ

Ֆիլչպրկ, Յունի. 14. Ուրախալ է որ վերջապէս Ֆիլչպրկի Հայ գաղութն ալ զգաց իւր ժողովրդին զարգացման միջոցը և հիմնեց Գրադարան մը, որուն անդրանիկ հանդէսը տեղի ունեցաւ անցեալ Շաբաթ երեկոյ ի կրտսէր Արմի Հօլ, ուր հաւաքուած էին բաւականի շուրջ երկուսու քաղմութիւն մը՝ լսելու Տօթթ. և Տիկնի Սարիճեանեան, որք մասնաւորապէս հրատարած էին Ուսթըրէն. ժողովին կը նախագահէր Սարաճեան Սրբազան: Տ. Ս. Կօշկահարեան գողարկի ճառ մը կարգաց մտքի զարգացման վրայ: Սրբազան պէտք եղած խրատներն տուաւ՝ գրադարանը ճոխացնելու. իսկ Տօթթ. Սարիճեան ցոյց տուաւ թէ ի՞նչ է գրքերու օգտակարութիւնը. Տիկնի Սարիճեանեանի երգեցողութիւնը մեծ տպաւորութիւն թողուց թէ՛ հանդիսականաց և թէ՛ այն Ամերիկացւոց վրայ, որոնք սրահին դուռը խնոնուած՝ մտիկ կընէին:

Ժողովին հասոյթը եղաւ § 25.25: Վարչութիւնը խորին շնորհակալութիւն յայտնեց ատենախօսներուն ու հանդիսականներուն: Ժողովը փակուեցաւ Սրբազանի պահպանիչով: Ա.Տ.ՈՍ

Չ Ո Ի Ա Բ Ճ Ա Լ Ի Բ

Պատերազանը—Արթին, դէմքը քիչ մը ուրախ ցոյց տուր, որ պատկերիդ մէջ խոտան չ'երևիս: Արթին—Ամենեւին չեմ ըներ. եթէ պատկերս զուարթ երևի, Իսլանտացի կինս պիտի պահանջէ որ տան մէջ ալ զուարթ երևիմ:

ՆՈՐ ՏՍՐԻԻ ՀԱՆԴԵՍ

Անցեալ կիրակի օր, Ուսթ Չպուքեանի Հայ գաղութը փարած Հայրենական յիշատակներուն, Հայկական Կողանդի առթիւ շատ սիրուն ու զուարճալից հանդէս մը տուաւ, որուն փութացած էին ներկայ գտնուել 200ի շուրջ երկուսու ազգայիններ:


Հանդէսը բացաւ Տ. Թ. Չարչափեան ու հակիրճ կերպով բացատրեց Չէյթուցիներու թշուառ կացութիւնը: Տ. Ե. Տէվէճեան խնամքով պատասխանուած ճառ մը կարդաց վերջացող տարիին վրայ: Երգեցիկ խումբը և Պ. Մ. Թաշճեան յուզիչ երգեր երգեցին: Հանդէսին ամենէն գողորկի մասն, որուն համար հպարտ ըլլալու է տեղական գաղութը, երկու դեռատի հայ օրիորդներու, Հայկանուշ Թըռնամանի և Մարի Մըսրէանի յատակ ու յուզիչ արտասանութիւններն և Երգերն էին: Տ. Չիթճեանի ատենախօսութիւնով փակուեցաւ հանդէսի Ա. մասը, անկէ վերջ սրահին մէջ տեղ մեծ սեղանի մը վրայ խառնուած բազմաստեակ մրգեղէնները բաժնուեցան հանդիսական պզտիկներուն ու մեծերուն: Հայրենական սովորութեան մը համեմատ՝ բազմազոյն մոմեր շարուած էին սեղանին վրայ, որոնց շուրջը խոնուեցան 20ի շուրջ Հայ մանուկներ: Տ. Ե. Պոյաճեան տաղչին մոմը վառեց՝ մէկ տղար նուիրելով Չէյթուցւոց:

Երեք ժամի շուրջ հանդիսականները կերան խմեցին անխնայ ի սէր Չէյթուցի անօթիներուն, և այս կեր ու խուսմէն ու հանդէսի մուտքէն 50 տղարի շուրջ զուտ հասոյթ մը գոյացաւ՝ ինպատա Չէյթուցի հանգանակութեան: Հանդիսականներն օտարական տէրն ժողով Տուսանէք՝ տուար մը նուիրեց խեղճ Հայ քաջերուն: Հանձնի տպաւորութիւններու տակ մեկնեցանք հանդէսէն ձ.

Ուրիշներ ալ յաջորդելու: Մ. Խրմ.

Ա Բ Ի Ս. Հ Ա Մ Ս Ա. Հ Ա Տ Ի

Արտածիչ և ներածիչ Արեւելեան ամեն տեսակ ըմպելիաց և զանազան նպարեղիւնաց:



Թիւ 92 Աւաշինկի ըն փողոց և 23 Բէքթըր փողոց, Նիւ Եորք: Խմելը փառասիր է թէ և, բայց զուտն ու մաքուրը գործածելը օգտակար է:

Խմէ, գինի, օղի բայց քիչ, և մաքուրը, զուտը կամ հիշ:

Իմ Արեւելքէ բերել տուած օղին ու մաթիլքան չի կրնար գերազանցուել, զի մեր յատուկ գործարանի մէջ պատրաստուած է՝ եղբորս անմիջական հսկողութեան տակ: Իմ հին ու նոր գինիներ կրնան գոն ընել ամեն սք: Նպարեղէններու մէջ առաջնակարգ սեղ մը կը բռնէ իմ վաճառատուն: Իմ ներածել տուած ապրանքներս ստէպ կը հասնին Արեւելքէն և կը վաճառուին շուտով: Ունիմ աճան տեսակ արեւելեան նպարեղէններ շաքարեղէններ, զէյթուն, ձիթախիչ, նէրկիլէ և անոր յարակից պարագաները, թրքական ծխախոտ, սիկըրէթ ևն. ևն.: Ոչ միայն մեր ապրանքներն ընտիր են, այլ գներն համեմատաբար դիւրամտայն ին են ամեն գաւառի քաղաքի համար:

Մեր դրից ու անկեղծութեան վրայ գաղտնիք տանելու ուղղ նոր յաճախողներուն՝ կրտսէր ծանօթ հայերէ վկայութիւններ դրկել:

Յանձնարարութիւնը գուրդի քաղաքներէ ճշդիւ կը կատարուին: Ամեն հրամանի հետ գնոյն գէթ մէկ տասներորդ մասը դրկուելու է կանխիկ, իսկ մնացեալը Սի. Օ. Տի:

Ֆ Ո Ւ Է Ա Թ Ո Ւ Ղ Թ

..... 1899

Table with 2 columns: Item name and amount. Items include 'Ստորագրեալ' (Signed), 'ԿՈՒՉԵՄ' (We don't), 'ՉԵՄ ՈՒՉԵՄ' (We don't), 'Իրիւրի Հայոց Ընդհանուր Առաջնորդ մնայ' (I remain the general leader of the Armenians), 'Անուն' (Name), 'Մականուն' (Surname), 'Տարիք' (Age), 'Ծննդավայր' (Place of birth), 'Հասցէ' (Address).

